

2016 թվականին իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

«Հայաստանի ազգային պարաօլիմպիկ կոմիտե» հկ-ի կողմից հունիս ամսին Երևանում անցկացվել է հաշմանդամների հանրապետական մարզական 14-րդ փառատոնը: Փառատոնին մասնակցել են **118** մարզիկ Հայաստանի Հանրապետության տարբեր մարզերից: Հաշմանդամ մարզիկները իրենց ուժերը չափել են 7 մարզաձևերում՝ սեղանի թենիս, անվասայլակներով բասկետբոլ, լող, բազկամարտ, ծանրամարտ, շախմատ և շոու դաուն:

«Հայաստանի կույրերի միավորում» հաշմանդամների հկ-ի կողմից հուլիս ամսին Երևանում անցկացվել է Հայաստանի կույր շախմատիստների տղամարդկանց անհատական եզրափակիչ առաջնությունը, որին մասնակցել են Հայաստանի Հանրապետության տարբեր մարզերի և Երևան քաղաքը ներկայացնող առաջին և երկրորդ խմբի հաշմանդամություն ունեցող **14** կույր շախմատիստներ, ընդամենը՝ **23** մարդ (9 ուղեկցորդ):

«Խուլերի հայկական սպորտային կոմիտե» ՀԿ-ի կողմից ապրիլ ամսին Երևանում անցկացվել են Հայաստանի Հանրապետության հունա-հռոմեական և ազատ ոճի ըմբշամարտի առաջնությունները, որտեղ հունա-հռոմեական ըմբշամարտին մասնակցել են Հայաստանի Հանրապետության տարբեր մարզերի **42** խուլ մարզիկներ (ընդամենը՝ 46 մարդ) և ազատ ոճի ըմբշամարտում՝ 42 խուլ մարզիկներ (ընդամենը՝ 46 մարդ): Ապրիլ ամսին Երևանում անցկացվել է խուլերի շախմատի Հայաստանի Հանրապետության 11-րդ առաջնությունը, որին մասնակցել են Հայաստանի Հանրապետության տարբեր մարզերի 34 խուլ շախմատիստներ (ընդամենը՝ 38 մարդ): Սեպտեմբեր ամսին Երևանում անցկացվել է խուլերի Հայաստանի Հանրապետության ֆուտզալի առաջնությունը: Առաջնությանը մասնակցել են 46 խուլ մարզիկներ, որոնք հանդես են եկել 5 թիմերով՝ Հայաստանի Հանրապետության տարբեր մարզերից և Երևան քաղաքից (ընդամենը՝ 46 մարդ):

«Հայկական հատուկ օլիմպիադաներ» հկ-ի կողմից մայիս ամսին Երևանում «Հայկական հատուկ օլիմպիադաներ» հասարակական կազմակերպությունը անցկացրել է «Համաեվրոպական ֆուտբոլի շաբաթ» ծրագրով ֆուտբոլի հանրապետական առաջնությունը: Առաջնությանը մասնակցել են Հայաստանի Հանրապետության տարբեր մարզերի և Երևան քաղաքի 5 հատուկ դպրոցների աշակերտներ: Յուրաքանչյուր թիմ ներկայացրել է 12-15 տարեկան 8 մարզիկի: Մրցումներին մասնակցել է **60** մարդ: Նոյեմբեր ամսին Երևանում անցկացվել է

հայկական հատուկ օլիմպիադաների արվեստիկայի հանրապետական մրցումները: Միջոցառմանը մասնակցել են Հայաստանի Հանրապետության տարբեր մարզերի և Երևան քաղաքը ներկայացնող 5 հատուկ դպրոցների 50 աշակերտներ (ընդամենը՝ 75 մարդ): Դեկտեմբեր ամսին Երևանում անցկացվել է «Սպորտլանդիա» հանրապետական սպորտային միջոցառումը: Մրցումներին մասնակցել են Հայաստանի Հանրապետության տարբեր մարզերի և Երևան քաղաքը ներկայացնող հատուկ դպրոցների 70 աշակերտներ (ընդամենը՝ 90 մարդ):

Մայիսի 1-11-ը Իրանի մայրաքաղաք Թեհրանում «Խուլերի հայկական սպորտային կոմիտե» հասարակական կազմակերպությունը մասնակցել է **խուլերի երիտասարդների և մեծահասակների ըմբշամարտի աշխարհի առաջնությանը** (հունա-հռոմեական և ազատ ոճի): Հայաստանի Հանրապետությունը ներկայացված է եղել **12** խուլ մարզիկներով: Երիտասարդների մրցապայքարում ազատ ոճի ըմբիշ Սամվել Հովհաննիսյանը (55 կգ քաշային) դարձել է բրոնզե մեդալակիր: Սենիկ Սերոբյանը (50 կգ քաշային), խուլերի ըմբշամարտի աշխարհի առաջնությանը հունա-հռոմեական ոճում ոսկե մեդալ նվաճելուց բացի, հանդես գալով նույն քաշայինների ազատ ոճում, դարձել է բրոնզե մեդալակիր: Հունա-հռոմեական ոճի ըմբիշ Արարատ Սարգսյանը (74 կգ քաշային) դարձել է բրոնզե մեդալակիր: Մեծահասակների մրցապայքարում, մրցաշարի կանոնների համաձայն, Սարգիս Սարգսյանը (59 կգ քաշային) և Ժորա Գրիգորյանը (71 կգ քաշային) հանդես են եկել ինչպես հունա-հռոմեական, այնպես էլ ազատ ոճի մրցաձևերում՝ նվաճելով երկուական արծաթե մեդալ: Ընդամենը նվաճել են 8 մեդալ՝ 1 ոսկի, 4 արծաթ, 3 բրոնզ:

Պարալիմպիկ խաղեր

Սեպտեմբերի 7-18-ը Բրազիլիայի Ռիո դե Ժանեյրո քաղաքում կայացած 15-րդ ամառային պարալիմպիկ խաղերին Հայաստանի Հանրապետությունը ներկայացված է եղել հաշմանդամություն ունեցող **2** մարզիկներով՝ ծանրամարտ և լող մարզաձևերում: Ծանրամարտ մարզաձևում հանդես եկող Գրետա Վարդանյանը 55 կգ քաշային կարգում գրավել է 5-րդ տեղը: Գրետան հաջող է կատարել իր բոլոր 3 մոտեցումները՝ բարձրացնելով համապատասխանաբար 90, 95 և 96 կգ-անոց ծանրաձողը:

«Խուլերի հայկական սպորտային կոմիտե» ՀԿ-ի կողմից 2016 թվականի մայիսի 16-26-ը Երևանում անցկացվել է **խուլերի շախմատի աշխարհի անհատական**

առաջնությունը: Առաջնության բացման արարողությանը մասնակցել են ՀՀ Նախագահ, Հայաստանի շախմատային ֆեդերացիայի նախագահ Սերժ Սարգսյանը, Շախմատի միջազգային ֆեդերացիայի նախագահ Կիրսան Իլյումժինովը, Խուլերի շախմատի համաշխարհային կոմիտեի նախագահ Ֆիլիպ Գարդները: Առաջնությանը մասնակցել են **24** պետությունների **92** շախմատիստներ: Մրցաշարին մասնակցել են **7** հայ շախմատիստներ, որոնցից 2-ը զբաղեցրել են մրցանակային տեղեր: Պատանիների մրցապայքարում Սարո Մելքոնյանը, վաստակելով 4 միավոր, նվաճել է արծաթե մեդալ, իսկ Հակոբ Հակոբյանը 4.5 միավորով վետերանների մրցապայքարում դարձել է բրոնզե մեդալակիր:

Ֆիզկուլտուրային-առողջարարական միջոցառում Երևանի լողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիրի սաների մասնակցությամբ՝ նվիրված Հայաստանի Հանրապետության Անկախության տոնին՝ **20** երեխաներ՝ 10 աղջիկ և 10 տղա:

«Փրկություն հաշմանդամ երեխաների և երիտասարդների կենտրոնում» անցկացվել է ֆիզկուլտուրային- առողջարարական միջոցառում, որին մասնակցել են կենտրոնի 53 երեխաներ և երիտասարդներ: